# ԲԱՌԱՐԱՆ

## ԳՐՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ
## ԹՈՒՐՔԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ

# ԲԱՌԱՐԱՆ

## Գրքում գործածված վարչական, զինվորական, կրոնական, ճարկային և այլ տերմինների և բառերի*:

### Ա.

Ազաբ — عزب — Ամուրի, չամուսնացած. Օսմանյան բանակի տեղական զորամասերի մի մասը կազմված էր միայն ամուրիներից: Ազաբ Աղասը՝ ազաբ զինվորների պետը:

Աթեբե — عتبه — Դուռ, արքունի դուռ, ապարանք, նվիրական վայր, ուխտատեղի:

Աթեբեի-Ալիյե — عتبه عاليه — Նվիրական վայրեր՝ Քերբելա, Նեջեֆ և այլն:

Ալ-Օսման — آل عثمان — Ալ՝ գերդաստան, տոհմ, դինաստիա. Ալ-Օսման օսմանյան սուլթանների դինաստիան:

Ալայ — آلاى — Գունդ, զորագունդ, թափոր, շքերթ: Ալայ-Բեյի՝ էյալեթի սիփահիների պետը, (տե՛ս սիփահի):

Ալթուն — آلتون — Ոսկի, ոսկեդրամ, որն հավասար էր հարյուր դուրուշի (լիրա):

---

* Ինչպես հիշել ենք առաջաբանում, թուրքական աղբյուրներում գործածված բազմաթիվ բառերի և որոշ տերմինների բառացի թարգմանությունը հաճախ անհնար է: Ընթերցողներին որոշ դյուրություն տալու նպատակով մենք կազմեցինք սույն փոքրիկ բառարանը, գրքում գործածված թուրքերեն բառերի և որոշ տերմինների թարգմանությամբ և համառոտ բացատրությամբ:

Բառարանում մենք ուշադրություն ենք դարձրել բառերի և տերմինների գլխավորապես պատմական ժամանակաշրջանի (XVI—XVIII դդ.) իմաստին և գործածության ձևին: Թուրքական բառերի ընթերցումն ու արտասանությունը հեշտացնելու համար, տալիս ենք նաև հայերենով:

Ակչե — آقچه — (ակչա), փոքր արծաթյա դրամ, ղուրուշի 1/120 մասը:

Ահդնամե — عهدنامه — Դաշնագիր, պետությունների միջև կնքված դաշնագիր:

Ահդնամեի-հյումայուն — همايون عهدنامه — Փադիշահական ֆերման, խաքքը-հյումայուն:

Աղա — آغا — Մեծ, տեր, ղեկավար, պետ: Արևելքի շատ երկրներում տիտղոս է: Գործ է ածվում մի շարք բարդ ձևերով (պալատական, զինվորական և այլ պաշտոնների մասին): Հարեմ-Աղասը՝ Հարեմի Աղան, Իչ-Աղալարը, Դըշ-Աղալարը՝ Ներքին, Արտաքին Աղաներ, Ենիչերի-Աղասը՝ ենիչերիների աղան և այլն: Աղա-բեյ՝ ավագ եղբայր:

Այեթ — آيت — Նվիրական ղուրանի սուրերի (գլուխ) բովանդակած նախադասություններից ամեն մեկը: Այեթի-Քերիմե, Այեթի-Շերիֆե՝ նվիրական այեթ:

Աման — امان! — Բացականչություն՝ ամա՜ն. խնդրանք, ներողամտության խնդրանք: Պատերազմում «աման խնդրել» կամ «ամանով հանձնվել»: Աման-Նամե՝ հանձնվելու խնդրագիր:

Ամիլ — عامل — Արաբների իշխանության օրով վարչական պաշտոնյա, վալի, մյութասարրիֆ:

Այան — اعيان — Հասարակության հարգելի, պատվավոր և ազդեցիկ անդամ: Ավելի ուշ դարաշրջանում՝ ծերակուտական. Մեջլիսի Այան՝ Ծերակույտ, սենատ:

Աշար — عشر — Տասանորդի հարկը, շարիաթական տասանորդ:

Աջեմ — عجم — Ոչ-արաբական ազգություններ և ցեղեր, հատկապես իրանցիներ:

Աջեմիստան — عجمستان — Պարսկաստան, Իրան:

Աջեմի-օղլանլար — عجمى اوغلانلر — Պատերազմական գերիների որոշ մասը, որոնք հատուկ կրթություն էին ստանում ենիչերիական և այլ զորամասեր մտնելու համար:

Ասիթանե — آستانه — Մայրաքաղաք, սուլթանության կենտրոն: Ասիթանեի—սեադեթ՝ Երջանիկ Ասիթանե, Ստամբուլ:

Արփալըք آرپەلق — Բարձր պաշտոնյաներին մթերքով կամ դրամով տրված ռոճիկ, հատկացում, թոշակ:

Արփա-էմինի — آرپه اميني — Այդ գործերի վարիչը, էմինը:

Արմաղան — ارمغان — Նվեր, ընծա:

Արնավուտլուք — ارناوودلق — Ալբանիա, Արնավուտ՝ ալբանացի:

Ասես — عسس — Գիշերապահություն և հսկողություն կատարող հատուկ պաշտոնյա: Գիշերապահ. Ասես-Բաշը՝ դրանց պետը:

Ավամ — عوام — Հասարակություն. հասարակության ցածր դասեր, անհատներ. Ավամ ադամ՝ առանց կրթության մարդ:

Բ

Բաբ باب — (հոգ. Էբվաբ). Դուռ, մուտք, անցք, լեռնանցք: Բարձր հիմնարկություն:

Բաբ-էլ-էբվաբ — باب الابواب — Դերբենդ քաղաքի անուններից մեկը:

Բաբը-Ալի կամ Բաբալի — باب عالی — Բարձրագույն Դուռ, Կ. Պոլսում սադրազամություն և մի շարք մինիստրությունների պետական շենքը: Հաճախ գործ է ածվում Օսմանյան կառավարության իմաստով:

Բաբը-Ֆեթվա — باب فتوی — և Բաբը-Մեշեյխեթ — իսլամական Շեյխ-ուլ-իսլամի հիմնարկությունը:

Բաբը-Սերասքերի — باب سر عسکری — Զինվորական բարձր հրամանատարությունը: Սերասքերության (տե՛ս սերասքեր) Դուռը:

Բաբ-ուլ-Սեադե — باب السعادة } Սուլթանական հարեմ:
Բաբ-ուլ-Շերիֆե — باب الشریفه }

Բաբը-Հյումայուն — باب همایون — Կայսերական պալատի (սարայ) մեծ և պաշտոնական Դուռը:

Բալթաջը — بالطجی — Փադիշահական պալատի հասարակ ծառաներից:

Բաշ-Վեքիլ — باش وکیل — Գլխավոր մինիստր: Վեքիլ (փոխանորդ) էր կոչվում, որովհետև նա փոխարինում էր փադիշահին և համարվում էր նրա բացարձակ լիազորը: Բաշ-Վեքիլը կոչվում էր նաև Ռեյիսի-Վյուքելա՝ Մինիստրների խորհրդի նախագահ, Սադրազամ (տե՛ս Սադրազամ):

Բաշ-Բուղ — باش بوغ — Հրամանատար, գլխավոր, ոչ կանոնավոր զինվորական խմբերի հրամանատար, Սերքերդե (տե՛ս Սերքերդե):

Բաշ — باش — Գլուխ, գլխավոր, պետ։ Բարդություններում՝ Բաշ-Վեքիլ, Բաշ-Քյաթիբ, Բաշ-չավուշ։

Բաջ — [illegible] — Տուրք, հարկ, մաքս։ Տեղափոխվող ապրանքների և մթերքների համար վճարված մաքս, տուրք։

Բալեմեզ — بالیمز — (ճիշտը՝ Բալյեմեզի), այդ անունով մի իտալացու կողմից շինված հին տիպի թնդանոթ։

Բեզիստան — بزستان Փակ շուկա, որտեղ վաճառվում էին թանկագին կերպասներ, գոհարեղեն և զենքեր։

Բեդելի-ասկերի — بدل عسکری — Թուրքիայում մինչև 1908 թ. Սահմանադրության հրատարակումը ոչ-մուսուլման հպատակների զինվորական ծառայության փոխարեն վճարած հարկը։

Բեդելի-էսարեթ — بدل اسارت — Տե՛ս Փենջիք բառը։

Բեյ — بك — Բեյ, էֆենդի, հարուստ և առաջավոր մարդ։ Բարդություններում՝ Աշիրեթ-Բեյի, Ալայ-Բեյի, Կարա-Դաղ Բեյի և այլն։

Բեյլիք — بكلك — Բեյություն աստիճան, ազնվականություն։ Մի բեյի իշխանության տակ գտնված երկիր, երկրամաս, էյալեթ։ Պետական, կառավարական սեփականություն։ Անադոլուի բեյությունները։

Բեյլերբեյի — بكلربكی — Վեզիրից և միրմիրանից հետո քաղաքացիական բարձր աստիճան։ Էյալեթների կառավարիչը։

Բեկթաշի, Բեկթաշիլիք — بکتاشیلك، بکتشی — Հաջի Բեկթաշ-Վելիի կողմից հիմնված դերվիշական միաբանություն։

Բեկլեքջի — بکلکجی — Կայսերական Դիվանի գրասենյակի պետը։

Բերաթ — برات — Փադիշահի կողմից տրված աստիճանների, շքանշանների և արտոնությունների ֆերման։

Բերիյե — بریه — (հոգ. բերայա) Ռայա չեղող մարդիկ. հասարակություն։

Բոստանջի — بوستانجی — Փադիշահական պարտեզի (Խաս-բաղչե) ծառայողներ ու պահապաններ։ Ավելի ուշ ժամանակում կայսերական պալատի պաշտպանության գործում ծառայող որոշ դասի զինվորներ։ Բոստանջի-Բաշը՝ այդ դասի զինվորների պետը, որը միաժամանակ հսկում էր քաղաքի կարգ ու կանոնի պահպանության գործերին։

Բոլյուկ — بلوك — Վաշտ, հեծելավաշտ։

Բոլյուկաթը-էրբաա — بلوكات اربعه — (Տե՛ս էրբաա)։

Դանիշմենդ — دانشمند — *Ուսման և գիտության տեր, գիտուն, հնում Նայիրի տրամադրության ներքո, նրա օգնականի պաշտոնը կատարող անձ։*

Դալ-Կըլըչ — دال قليج — *Սուրը պատյանից հանած, սուսերամերկ։ Ենիչերիական բանակում հատուկ զինվորների խումբ։*

Դար-ուլ-Սուլթանե — دار السلطنه — *Սուլթանների բնակավայր, մայրաքաղաք։* Դար՝ *վայր, բնակավայր, տուն, օրինակ՝* Դար-ուլ-Ֆյունուն՝ *համալսարան,* Դար-ուլ-Մուալիմին՝ *ուսուցչական ինստիտուտ,* Դար-ուլ-հարբ՝ *պատերազմի երկիր, վայր։*

Դեբաղ — دباغ — *Կաշեգործ, կաշիներ մաքրող և զանազան տեսակի կաշիներ պատրաստող արհեստավոր, դաբաղ։*

Դերգյահ — درگاه — *Դուռ, դռան ճակատը, մեծ մարդկանց դուռը, որին պետք է դիմել խնդրանքով։*

Դերգյահի-Ալի — درگاه عالی — *Փադիշահական բարձր Դուռը։*

Դերբենդ — دربند — *Նեղ անցք, լեռնանցք, սահմանի վրա նեղ և դժվարանցանելի տեղեր։ Դերբենդ քաղաքը (բերդը)՝ Կասպից ծովի եզերքում, հայտնի իր նեղ անցքով։*

Դերսաադեթ — درسعادت — *Երջանկության, բախտավորության վայր, այսպես էր կոչվում Ստամբուլը։*

Դեֆթեր — دفتر — *Տետր, ցուցակ, մատյան, հաշվեմատյան, դաֆթար։*

Դեֆթերխանե — دفتر خانه — *Կալվածների և հողերի արձանագրության և նրանց վերաբերյալ գործողություններին հսկող կառավարական հիմնարկություն։*

Դեֆթերդար — دفتردار — *Պետության եկամտի և ծախսերի մատյանները կազմող և նրանց վրա հսկող բարձր պաշտոնյան։ Այս պաշտոնը համապատասխանում էր ֆինանսների մինիստրի պաշտոնին։ Ավելի ուշ վիլայեթների ֆինանսներին հսկող պաշտոնյանները նմանապես* դեֆթերդար *կոչվեցին, իսկ սանջակներին (լիվա)՝* մուհասեբեջի, *կազաներին (գավառ)* մալ-մյուդիրի։

Դևշիրմե — دوشرمه — *Ժողովել, հավաքել, մանկաժողով։ Ենիչերիական բանակի համալրման համար քրիստոնյա ազգությունների երեխաների (տղաների) բռնի հավաքը։*

Դիզդար — دزدار — *Բերդապահ։*

Դերլիք — دیرلك — Անհրաժեշտ սնունդ, ռոճիկ, վարձք, ապրուստի միջոց:

Դինար — دینار — Հին ոսկեդրամ, որը մոտավորապես ¼ լիրայի արժեքն ուներ:

Դիրհեմ (տիրհեմ) — درم ، درهم — Պարսկերեն դիրհեմի արաբականացած ձևը: Դիրհեմը ծանրության կշռի չափ է, որը հավասար է օկկայի 400 մասից մեկին: Օկկան 400 դիրհեմ է:

Դիվան — دیوان — Մեծ Մեջլիս, Բարձ Մեջլիս, ատյան: Բանաստեղծի երկերի ժողովածուն: Դիվանի-Ալի՝ փադիշահական Բարձր Դիվան. Դիվանի-հարբ՝ պատերազմական, զինվորական ատյան:

Ե.

Ենիչերի — یکیچری — Ենիչերի, նոր զինվոր, ենիչերիական բանակի զինվոր. Ենիչերի-Աղասը՝ ենիչերիական բանակի հրամանատարը.

Եոլի-Կուլու — یولی قولی — Տեղական, նահանգային զինվոր:

Զ.

Զադե — زاده — Որդի, զավակ: Ընդհանրապես գործ է ածվում մի անձի ծնունդն ու ծագումը ցույց տալու համար: Օրինակ՝ Ռասուլ-Զադե, Թուրսուն-Զադե:

Զադեգյան — زادگان — Ազնվական, ազնվական ծագումով, երևելի, արիստոկրատ: Զադեգյան-սընըֆի՝ արիստոկրատիա:

Զարբազան — ضربزن — Մի տեսակ հին թնդանոթ՝ բերդեր ռմբակոծելու համար:

Զարբխանե — ضربخانه — Փողերանոց, դրամ կտրելու վայր: Զարբխանեի-հյումայուն՝ Կայսերական փողերանոց:

Զենդ — زند — Զրադաշտական կրոնի հիմնական նվիրական գիրքը, որը կոչվում է «Զենդավեստա»: Զենդավեստան գրված է իրանական հնագույն լեզվով, որը կոչվում է Զենդ լիսանի (լեզու):

Զերնիշան — زرنشان — Ոսկյա նշան, սրերի և այլ իրերի վրա փորագրվածք: Զերնիշանջի՝ այդ արհեստով պարապող վարպետ:

Զենջիր — زنجیر — Շղթա, Զենջիրբենտ՝ շղթայակապ:

Զեյլ — ذیل — Հավելված, ծանոթություն, լրացուցիչ գրվածք (պատմական և այլ երկերի):

Զեքյաթ — زكوة — Շարիաթական օրենքով ապրանքի և դրամի մաքրությունն ու հալալությունը ապահովելու համար տարեկան քառասունից մեկի ($^1/_{40}$) մնացիտին (մլկիթ) արված տուրքը։

Զըրա — ذراع — Երկարության չափ, արմնկաչափ, արմունկից մինչև միջնամատի ծայրի երկարությունը, արշին։

Զիմմի — ذمي — Իսլամական պետության հպատակ ոչ-մուսուլմանները. ռայաները։

Զիլկադե — ذي القعده — Արաբական տոմարի լուսնային տարվա 11-րդ ամիսը։

Զիլհիջջե — ذي الحجه — Արաբական տոմարի 12-րդ ամիսը։

Զըլլ — ظل — Ստվեր, շուք, պաշտպանություն. հովանավորություն. Զըլլ-Ուլլահ՝ Աստուծո ստվեր, իսլամական խալիֆաներին (և սուլթաններին) արված տիտղոսներից մեկը։

## Է.

Էզան — اذان — Մուսուլմաններին նամազի և աղոթքի հրավիրող մինարեից մյուեզզինի կարդացած աղոթքը (տե՛ս մինարե և մյուեզզին)։

Էլ — ال ،ايل — Ժողովուրդ, մարդիկ, ցեղ, աշիրեթ։ Երկիր, երկրամաս, վիլայեթ, օրինակ՝ Ռումելի, Կոջաելի։

Էհլ — اهل — Տեր, տիրացող, ունեցող։ Էհլի սերվեր՝ հարստության տեր, Էհլի-նամուս՝ պատվո տեր։ Բնակող, բնակիչ։

Էհլի Իսլամ — اهل اسلام — Իսլամական կրոնին պատկանող մարդիկ։

Էհլի-սյուննեթ — أهل سنت — Իսլամական կրոնին պատկանող, Մուհամմեդին հավատացող և նրա կողմից հիմնված սկզբունքներով առաջնորդվող մարդիկ։

Էյալեթ — ايالت — Նահանգ, երկրամաս։ Օսմանյան կայսրության վարչական մեծ միավորը։ Ավելի ուշ էյալեթի փոխարեն սկսեց գործածվել վիլայեթ տերմինը։

Էվկաֆ — اوقاف — (վակֆի հոգնակին), Բարեգործական նպատակով ջամիներին նվիրված կալվածներ, հող, խանութ և այլն։

Էվկաֆի-հյումայուն՝ Փադիշահի կողմից շնորհված վակֆներ։

Էվկաֆ նեզարեթի՝ վակֆների մինիստրություն։

**Էմիր** — أمير — *Երկրի և ժողովրդի գլխավորը, պետը. բարձր դասի և գերդաստանի պատկանող անձ: Հոգ.* ումերա:

**Էմիր-ուլ-ումերա** — امير الامرا — *Արաբական խալիֆաների ժամանակ զինվորական գործերի և կարգ ու կանոնի պահպանության հսկող անձանց տրված տիտղոսը: Իսկ քաղաքացիական տիտղոս տրվում էր միրմիրանությունից ցածր աստիճան ունեցողներին:*

**Էնջյումեն** — انجمن — *Ժողով, ընկերություն, ինստիտուտ:* Էնջյումենի-Դանիշ՝ *ակադեմիա:* «Թարիհի Օսմանի Էնջյումենի»՝ *Օսմանյան Պատմության Ընկերություն:*

**Էջել** — أجل — *Մահվան ժամ. մահ, օրհաս. Նախախնամության կողմից սահմանված մահվան ժամ, որից չի կարելի խուսափել:*

**Էրբաա** — اربعة — *Չորս.* ջիհաթի-էրբաա՝ *հորիզոնի չորս կողմերը:* Բեոլյուքաթի-էրբաա *չորս վաշտերի զորամասեր,* աջ ու ձախ ուլուֆեջիներ *(տե՛ս),* աջ ու ձախ ղարիբներ *(տե՛ս):*

**Էսնաֆ** — أصناف — *Դաս, խմբակցություն, արհեստավորների, խանութպանների ու ծառայողների ըստ համքարության կազմակերպված միություններ, օրինակ* Ռաքքըջիլեր էսնաֆի. Չորեքչիլեր-էսնաֆի *(պղնձագործների, հացագործների համքարություններ):*

**Էսնաֆ Քեթխուդասը** — اصناف كتخداسى — *Էսնաֆի կողմից ընտրված և կառավարության կողմից հաստատված էսնաֆի գործերի վարիչը:*

**Էրքան** — اركان — *(եզ.* Ռյուքն), *Հիմք, հենարան, կառավարության հիմքը կազմող բարձր պաշտոնյաներ (վեզիրներ, կազասքերներ և այլն).* Էրքանի դեվլեթ. Էրքանի-հարբիյե՝ *զինվորական շտաբ:*

**Էֆրենջ, Էֆրենջի** — افرنج، افرنجى — *(ֆրանսերեն* France *բառից): Միջին դարերում* Էֆրենջի *էին կոչվում եվրոպական և մասնավորապես ֆրանսիական ժողովուրդները:* Էֆրենջի, *եվրոպացիներին, այսինքն ֆրանսիացիներին հատուկ:* Թարիխի-էֆրենջի՝ *եվրոպական պատմություն:*

## Ը.

**Ըյդ** — عيد — *Տոն, բարեպաստիկ օր, նվիրական օր:*

Ըյդին — [illegible] — *Տոնական, բայրամի առթիվ մատուցված նվեր. նվիրաբերություն:*

# Թ.

Թաբակա — طبقه — *Աման, շարք, դաս, աստիճան:*

Թարիկատ — طريقات — *Մուսուլմանական դերվիշների միաբանություն:*

Թայինատ — تعيينات — *Որոշում, նշանակում, զինվորներին կամ պաշտոնյաներին տրված հատկացում (ռոճիկ, մթերք և այլն):*

Թարիխ — تاريخ — *Պատմություն,* Թարիխի-օսմանի, Թարիխի-սիյասի, Թարիխի-ումումի՝ *ընդհանուր պատմություն.* Թարիխչի՝ *պատմագիր, պատմաբան: Տե՛ս մյուվերրիխ:* Թարիխի՝ *պատմական:*

Թահրիր — تحرير — *Գրել, գրություն, գրանցում:* Թահրիր-դեֆթերի, *գրանցման մատյան:*

Թահրիրի-էմլաք — تحرير املاك — *Կալվածների հաշվառք:*

Թահրիրի-նուֆուս — تحرير نفوس — *մարդահամար:*

Թախսիսատ — تخصيصات — *Հատկացում, դրամական միջոցների հատկացում:*

Թանզիմատ — تنظيمات — *Կարգավորում, բարենորոգում,* Թանզիմաթի-խայրիյե՝ *Սուլթան Աբդուլ-Մեջիդի իշխանության օրոք (1839 թ.) Ռեշիդ փաշայի նախաձեռնությամբ հրատարակված բարենորոգումների հրովարտակը, որը հայտնի է* «Գյուլխանեի խաթթը-հյումայունի» *անունով:*

Թեզքերե — تذكره — *Տոմսակ, գրություն, գրությունների փոխանակում:*

Թեզքերեջի — تذكرجى — *Դատավարության նյութերը և բովանդակությունը արձանագրող պաշտոնյա:*

Թեշրիֆաթ — تشريفات — *Հանդիսավոր և պատվավոր ընդունելություն:*

Թեշրիֆաթչի — تشريفاتجى — *Արքունական պալատում, Սադրազամությունում և այլ պետական բարձր հիմնարկություններում պետական աստիճանավորներին և օտար պետությունների ներկայացուցիչներին ընդունող անձ:*

Թիմար — تيمار — *Հիվանդին (մարդ կամ կենդանի) խնամող.*

ծառայություն: Թուրքիայում ֆեոդալական հողամաս, որը տրվում էր սիփահիներին (տե՛ս), որի փոխարեն սիփահին պարտավոր էր որոշ թվով զինվորներ տալ: Սիփահին իրավունք ուներ այդ հողամասի (թիմարի) օրինական տասանորդը (աշար) և այլ հարկերը ստանալ:

Թուման — تومن، تومان — 10 հազար ակչեի արժեքով իրանական ոսկեդրամ (30 դուրուշ): Հնում գործ էր ածվում նաև զորամաս իմաստով, մի թուման (ֆըրկա) զինվոր (տե՛ս ֆըրկա):

Թերսանե — ترسانه — Նավաշինարան (ռազմական), Թերսանե-Ամիրե՝ ռազմածովային գործերի վարչություն:

Թեքալիֆ — تكاليف — Շարիաթի սկզբունքներով կամ պետական օրենքներով նշանակված հարկեր. Թեքալիֆի-Շերիյե՝ շարիաթական հարկեր:

Թեքֆուր — تكفور — Իշխող, տիրող, Անատոլուի և Ռումելիի գրավման ժամանակ իրենց նախկին իշխանությունը պահպանող որոշ իշխաններ թեքֆուր էին կոչվում:

Թեքիյե — تكيه — Մի շեյխի հովանավորության ներքո դերվիշների աղոթավայրը և բնակավայրը, իսլամական մենաստան, վանք:

Թեվկիի — توقيعى — կամ Թեվկիջի՝ փադիշահական ֆերմանների և հրամանագրերի (հյուքմ) վրա Թեվկիի կոչված հատուկ սուլթանական նշանը դրոշմող և նկարող բարձր պաշտոնյա:

Թեվլիյեթ — توليت — Փոխանորդություն: Մի վակֆի մյութեվելլի նշանակելը (տե՛ս մյութեվելլի): Մյութեվելլիություն:

Թեվեքքյուլ — توكل — Ճակատագրին հավատալով իր գործերը նախախնամության հանձնել:

Թուղ — توغ — կամ طوغ — Հնում փաշաներին, ըստ իրենց աստիճանին տրված հատուկ նշան, որը պատրաստվում էր ձիու պոչի մազերից: Թուղը լինում էր 1, 2 և 3 հատ, այդ պատճառով էլ փաշաները կոչվում էին մեկ, երկու կամ երեք թուղով փաշա:

Թուղրա — طغرا — Սուլթանի անունը բովանդակող բարդ և հատուկ նշան, որը դրոշմվում էր փադիշահական բոլոր գրությունների վրա (ֆերման, հրաման և այլն):

Թուղրաքեշ — طغراکش — *Թուղրայի նշանը գրոշմող հատուկ բարձրաստիճան պաշտոնյա:*

Թյուֆեկչի — تفکجی — *Հրացանագործ: Զինվորական մասերում հրացանները կարգավորող և նորոգող զինվոր կամ սպա: Փադիշահական պալատում հսկողություն կատարող պաշտոնյա:*

Թյուֆեկչի-Բաշը — تفکجی باشی — *Էյալեթներում կարգ ու կանոնին հսկող պաշտոնյաների պետը, որը փաստորեն* Ալայբեյիի *պարտականությունն է կատարում:*

Թոփչի — طوبجی — *Թնդանոթաձիգ,* Թոփչի-բաշը՝ *թնդանոթաձիգների պետը:*

Թոփխանե — طوبخانه — *Թնդանոթաձիգ զինվորների կենտրոնական վարչություն:*

## Ի.

Իբն — ابن — *Որդի, զավակ. օրինակ՝* Ահմեդ-իբն Հասան: *Գործածվում է նաև* Բենի *ձևով:*

Իլթիզամ — التزام — *Կարիք, պարտավորություն, կողմնակցություն: Կառավարական տուրքերի և եկամուտների որևէ ճյուղը (գլխավորապես գյուղատնտեսական հարկերը) նախապես վճարելու և երաշխավորելու պայմանով կապալով վերցնելը:* Իլթիզամչի *կամ* մյուլթեզիմ՝ *կապալով, այսինքն իլթիզամով վերցնող անձը:*

Իհթիսաբ — احتساب — *Խանութների չափերի և կշեռքների վրա հսկող հիմնարկություն, որը փաստորեն քաղաքապետության և ոստիկանության պաշտոնն ուներ: Այդ հիմնարկության կողմից ստացված տուրքը:* Իհթիսաբ-Աղասը՝ *Իհթիսաբի հիմնարկության պետը:*

Իգիթ, Իգիթ-Բաշը — ایکیت، ایکت باشی — *Քաջ, արի, կտրիճ մարդ:* Իգիթ-բաշը՝ *խանութների լոժայի գործադիր պաշտոնյա:*

Իրադե — اراده — *Հրաման, հրամանագիր, ֆերման (փադիշահի):* Իրադեի-ալիյե՝ *սադրազամի հրամանը:* Իրադեի-Սենիյե՝ *արքայական, փադիշահական Բարձր Հրաման:*

Իմարեթ — عمارت — *Շինարարություն, բարեշինություն, բարեգործական հիմնարկություն՝ աղքատներին կերակուր տալու համար:*

## Լ.

**Լաղըմ** — لاغم لغم — Վրան ծածկած ստորերկրյա անցք. կեղտոտ ջրերի հոսելու համար շինված անցք։ Բերդեր և ամրություններ պայթեցնելու համար տակից փորված անցք։ Լաղըմջի՝ նման անցքեր փորող բանվոր։ Թշնամու բերդը պայթեցնելու համար անցք փորող զինվոր։

**Լեվենդ** — لوند — (իտալերեն Levantino բառից աղավաղված է), արևելյան, արևելքցի։ Վենետիկցիների մոտ ռոճիկով ծառայող թեթևաշարժ զինվոր։ Թեթևաբարո, ճարպիկ, կոկիկ հագնըված երիտասարդ։

**Լիվա** — ليوا — Վարչական բաժանման երկրորդ միավորը՝ էյալեթից կամ վիլայեթից հետո։ Լիվան կոչվում էր նաև սանջակ՝ մյութասարրիֆի վարչության ենթակա։ Զինվորների բրիգադա, որի հրամանատարը կոչվում էր Միր-Լիվա։

## Խ.

**Խաթուն** — خاتون — Կին, պատվավոր կին, տիկին, խանըմ։

**Խաս, խասս** — خاص — Հատուկ, ոչ թե հասարակության այլ ընտրյալ դասին պատկանող։ Փադիշահին պատկանող, օրինակ խաս-օդու՝ փադիշահական զորարանակ, խաս-բաղչե, խաս-օդա. Փադիշահական խասսեր՝ փադիշահին պատկանող հողեր, կալվածներ։

**Խան, խանլըք** — خان، خانلق — Արևելքում վեհապետներին և իշխողներին հատուկ տիտղոս։ Օսմանյան սուլթաններն ևս կրում էին Խան լրացուցիչ տիտղոսը։ Խանլըք՝ խանություն, խանի իշխանության ներքո գտնված երկրամասը, օրինակ Երևանի խանությունը, Ղրիմի խանությունը։

**Խանեդան** — خاندان — Մեծ ընտանիք, ցեղ, արքայական դինաստիա։ Խանեդանի Ալ-Օսման՝ Օսմանյան սուլթանների դինաստիան։ Խանեդանլըք՝ մեծ ընտանիքի պատկանելիություն։

**Խանե** — خانه — Տուն, բնակարան, շինություն։ Բարդություններում՝ քիքարխանե՝ գրադարան, հջզախանե՝ դեղատուն, խաստախանե՝ հիվանդանոց, Թոփխանե՝ թնդանոթ ձուլելու արհեստանոց։

**Խազեր դենիզի** — خزر دكيزى — Խազերի ծով, Կասպից ծով։

**Խազինե** — خزينه — *Գանձարան, սնդուկ, պետական գանձարան:* Խազինեի-խասսե՝ *փադիշահական կալվածների, գույքերի, եկամուտների և ծախքերի վարչություն:* Խազինեդար՝ *գանձարանի պաշտոնյա:*

**Խաթիբ** — خطيب — *Հռետոր, ճարտասան, ճառախոս. ջամիներում* խուտբե *(տե՛ս) կարդացող պաշտոնյա:*

**Խարաջ** — خراج — *Հարկ, գլխահարկ, ոչ-իսլամ հպատակներից զինվորական ծառայության փոխարեն առնվող գլխահարկը (տե՛ս ջիզիյե):*

**Խաթթը-հյումայուն** — خط همايون — *Փադիշահական ֆերման, որը հանդիսավոր կերպով կարդացվում էր Բարը-Ալիյում (Բարձրագույն Դուռ): Կոչվում էր նաև* խաթթը-շերիֆ:

**Խալիֆե** — خليفه — *Փոխանորդ, հաջորդ, տեղակալ, Մուհամմեդի հաջորդն ու փոխարինողը, որը համարվում էր աշխարհի բոլոր մուսուլմանների իմամն ու շարիաթի հովանավորողը:*

**Խալաթ** — خلعت — *Փադիշահի և վեզիրների կողմից իբրև վարձատրություն և հարգանքի նշան նվիրված կաֆթան, խալաթ:*

**Խալիջ** — خليج — *Ծոց, ծովածոց, նեղուց, ջրանցք.* Խալիջի-Կոնստանդինիե՝ *Ստամբուլում դեպի Քաղաթխանե երկարած ծոցը, որը հայտնի է* Ոսկեղջյուր *անունով:*

**Խումս** — خمس — *Մեկ հինգերորդ մասը:*

**Խումսու-Շերի** — خمس شرعى — *Շարիաթական 1/5, Շարիաթական օրենքով պատերազմական ավարի և գերիների 1/5 մասը փադիշահին և պետությանն էր պատկանում:*

**Խոջա** — خوجه — *Էֆենդի, աղա, չելեբի. ուսուցիչ, դասախոս, փաթթոցավոր (սարըքլի) էֆենդի,* խոջա էֆենդի:

**Խաջեգյան** — خواجه كان — *Հնում Բարը-Ալիի դրասենյակի էֆենդիներին հատուկ աստիճան, կայսերական Դիվանի խաջեգան:*

**Խան** — خوان — *Երգիչ, կարդացող,* Ղուրան-խան՝ *Ղուրան կարդացող,* Դուա-խան՝ *աղոթք կարդացող,* Շահնամե-խան՝ *Շահնամե կարդացող:*

**Խանենդե** — خواننده — *Երգիչ, գեղեցկաձայն երգիչ:*

**Խումբարա** — خمباره — *Երկաթից շինված, մեջը պայթուցիկ նյութերով լցված մեծ գնդակ, որն արձակվում էր «Հավան» անուն թնդանոթով:* Խումբարաջի՝ *խումբարա արձակող զինվոր:*

Կաբիլե — قبيله — Ցեղ. աշիրեթ: Միևնույն ցեղից ծնունդ առած և միևնույն ցեղապետի իշխանության ներքո գտնվող հասարակություն, միասին քոչվորությամբ ապրող ցեղեր:

Կազա — قضا — Վարչական բաժանման մեջ սանջակի ստորաբաժանումը, գավառ:

Կազասքեր — قاضعسكر — Օսմանյան կայսրության մեջ շեյխ-ուլ-իսլամից հետո բարձրաստիճան հոգևորական անձ: Կազասքերներից մեկը կոչվում էր Ռումելիի կազասքեր, մյուսը Անադոլուի կազասքեր:

Կազը (կամ կադը) — قاضى — Շարիաթի համաձայն դատարանում որոշում տվող դատարանի նախագահ: Կազը կամ Կադը էֆենդի:

Կանուն — قانون — Օրենք, կարգ, կանոն, պետության կողմից գործադրվող ընդհանուր օրենքներ: Կանունի-թիջարեթ՝ առևտրական օրենք, կանուննամե՝ օրենքների ժողովածու, օրենսգիրք:

Կանունի — قانونى — Օրինական, օրենքին համապատասխան: Օրենսգիր, Կանունի-Սուլթան Սուլեյման:

Կալֆա — قلفه — Աշակերտ, արհեստավորի աշակերտ: Դրասենյակում ստաժավոր քարտուղար, Հաջի-կալֆա՝ Քյաթիբ-Չելեբիի երկրորդ անունն է:

Կալե — قلعه — Բերդ, բերդաքաղաք, ամրություն. Հասան-Կալե, Թոփրաք-Կալե, Սուխում-Կալե:

Կամուս — قاموس — Բառարան, բառագիրք, Ֆիրուզի-Աբադիի արաբերեն լեզվով կազմած բառարանը կոչվում էր «Կամուս»: Այդ անունը իբրև հասարակ անուն (բառարան իմաստով) տարածվեց բոլոր բառարանների վրա:

Կամուսի-թուրքի — قاموس تركى — Հայտնի բառարանների հեղինակ և բառարանագետ՝ Շեմսեդդին Սամիի թուրքերեն մեծ բացատրական բառարանը կոչվում է «Կամուսի-թուրքի» (2 հատոր, 1575 էջ, Ստամբուլ, 1317 թ. (1899—1900):

Կամուս-ուլ-ալեմ — قاموس الاعلام — Նույն հեղինակի էնցիկլոպեդիական (պատմության և աշխարհագրության) բառարանը, վեց հատոր, 4820 էջ, Ստամբուլ, 1306—1316 թթ. (1888—1898):

Կասըմ-գյունը — قاسم كونى — *Կասըմի օրը: Տարին երկու հավասար մասի բաժանող նոյեմբեր ամսի 26-րդ օրը, որը համարվում է ձմեռվա սկիզբը: Կոչվում է նաև* Ռուզի-Խըզըր:

Կափը — قپو — *Դուռ (սենյակի, տան, պալատի, բերդի),* Փաշա-Կափըսը՝ *Սադրազամի պաշտոնավայրը, նահանգներում կառավարական տուն,* Աղա-Կափըսը՝ *Ենիչերիների Աղայի պաշտոնավայրը:* Կափը-Օղլանը՝ *պատրիարքարանների և դեսպանատների հատուկ ծառայող, որի պարտականությունն էր կառավարական պաշտոնավայրերի հետ կապ պահպանել:* Կափը-Քեթխուդասը՝ *վիլայեթների կառավարական հիմնարկների գործերի կառավարիչը.* Կափը-Ջուգադարը՝ *այդ քեթխուդայի տրամադրության տակ ծառայող:*

Կափըջը-Բաշը — قپوجى باشى — *Փադիշահական ապարանքի կամ Դռան գլխավոր դռնապանը:* Կափըջի-Բաշիի *պաշտոնը համարվում էր բարձր և պատվավոր պաշտոն:*

Կափը-Խալքը — قپو خلقى — *Փադիշահի անմիջական տրամադրության ներքո գտնվող հատուկ զինվորների խումբը:*

Կափը-Կուլու — قپو قولى — XVI—XVII *դարերում Կափու-կուլու կոչված զինվորական մասերը, Ենիչերիներից հետո կազմում էին Օսմանյան պետության կանոնավոր բանակի հիմնական զորամասը, որն ուներ 7 հետևակ օջաքներ և վեց հեծյալ վաշտեր:*

Կափուդան *(Կապտան)* — قپودان — *Նավապետ.* Կափուդան-Դերյա *կամ* Կափուդան փաշա՝ *հնում ծովային մինիստրի պաշտոնը կատարող փաշա:*

Կըբլե — قبله — *Նամազի ժամանակ երեսը դարձած կողմը: Բոլոր իսլամների համար պարտադիր է երեսը դարձնել Նվիրական Քյաբեի կողմը (տե՛ս Քյաբե): Հարավային քամի, հարավ:* Կըբլեգյահ՝ *Կըբլեի կողմը, կըբլեի վայրը:*

Կըթաա *(կըթա)* — قطعه — *Ցամաքամաս, երկրագնդի ցամաքամասերից ամեն մեկը: Բանաստեղծական գրվածք, որն անընդմեջ երկու տուն ունի և որի առաջին տունը անհանգ է:*

Կըլըչ — قلچ — *Սուր, թուր:* Կըլըչդան Կեչիրմեք՝ *սրի անցկացնել:* Կըլըչ *էր կոչվում նաև ֆեոդալական հողամասերից (թիմար և զեամեթներից) ստացված եկամուտը:*

Կոյե — قيه — *Տե՛ս օկկա բառը:*

Կըշլաք — قيشلاق — *Ձմեռանոց, ձմեռվա արոտավայր, կըշլաղ։*

Կըշլա — قيشله — *Զորանոց։ Այս բառը ծագում է* կըշլաք *բառից, այսինքն զինվորների պատերազմը դադարած ձմեռվա ամիսներին ձմեռած վայրը։ Հետագայում գործածվել ընդհանրապես զորանոց իմաստով։*

Կուլ — قول — *Ստրուկ, ծառա, պատերազմում կենդանի բռնված և վաճառքի հանված գերի։* Թանըր-կուլու՝ *Աստուծո ծառա.* Կուլ-օղլու՝ *գերիների որդիներից կազմված զորամաս, որը բանակում ծառայություն էր անում։*

Կուլաչ — قولاج — *Երկարության չափ։ Բացված և երկարած երկու ձեռքերից մեկի ծայրից մինչև մյուսը եղած տարածությունը, որը հավասար է մոտավորապես երկու արշինի։*

Կոնաք — قوناق — *Կառավարական շենք, պետական հիմնարկություն։ Մեծ տուն, իջևան, գիշերանոց։ Երկու իջևանի միջև եղած տարածությունը (մեկ օրվա ճանապարհ) նույնպես* կոնաք *է կոչվում։*

Կուբբե — قبه — *Կամար, գմբեթ։*

Կուբբե-ալթը — قبه آلتی — *Օսմանյան սուլթանների մասնակցությամբ Բարձր Մեջլիսի գումարման և այլ հանդիսավորությունների հատուկ վայրը, որը կամարավոր շինություն էր։*

Կուբբե վեզիրլերի — قبه وزيرلرى — *Այդ կամարավոր շինության մեջ, կամարների տակ հավաքված վեզիրները կոչվում էին կամարի վեզիրներ կամ* կամարում ապրող վեզիրներ *(Կուբբե-նիշին)։*

Կուրբան — قربان — *Զոհ, զոհաբերություն։ Աստուծո ողորմությունը խնդրելու նպատակով, շարիաթով միսը ուտելը թույլատրված կենդանիների զոհը։*

Կուրբան-Բայրամը — قربان بايرامى — *Տե՛ռ Բայրամ։*

## Հ.

Հադիս — حادث — *Նոր երևան եկած, նորաստեղծ, արարած։*

Հաքիմ — حاكم — *Իշխող, տիրող, հաղթող։ Շարիաթի կանոնների գործադրությանը հսկող կադի (կաղի), դատավոր։*

Հաքիմ — حكيم — *Իմաստուն, գիտուն, փիլիսոփա, բժիշկ։*

Հավան — هاوان — *Սանդիկ, հավանգիկ։*

Հավան թոփու — هاوان طوپی — *Խումբարա արձակող հին տեսակի թնդանոթ (տե՛ս խումբարա)։*

Հաքիմիյեթ — حاكميت — *Տերիշխանություն, գերագույն իշխանություն։*

Հաջջ — حاج — *Զիլ-հիջջե ամսում մեծ հանդիսավորությամբ նվիրական Քյաբեի (Մեքքե) ուխտագնացությունը (տե՛ս Քյաբե)։ Այդ ուխտագնացության մասնակիցները* հաջի *են կոչվում։*

Հարեմ — حرم — *Մուտքը ամենքին չթույլատրված վայր, հարեմ, իսլամական կանանոց,* Հարեմ-Աղասը՝ *Հարեմի աղան.* Հարեմի-հյումայուն՝ *Սուլթանի հարեմը։*

Հարեմեյնի-Շերիֆեյն — حرمين شريفين — *Իսլամական նվիրական երկու քաղաքներ* — Մեքքե և Մեդինե։ *Ընդունված է այդ քաղաքները անվանել՝* Մեքքեի մյուքերրեմե *(Նվիրական Մեքքե) և* Մեդինեի Մյունեվվերե *(Լուսավոր Մեդինե)։*

Հյուքմ — حكم — *Հրաման, հրամանագիր, վճիռ, կանոն, օրենք։*

Հիջրեթ — هجرت — *Գնալ, գաղթել, տեղափոխվել. Մուհամմեդ մարգարեի Մեքքեից Մեդինե փախուստը, որից սկսվում է Հիջրեթի թվարկությունը (տարեթիվը)։*

Հիջրի թարիխ — هجری تاریخ — *Հիջրեթի տարեթիվը։*

Հեյեթ — هيئت — *Կազմ, հանձնաժողով. մի օրգանի բոլոր անդամները միասին վերցրած։ Միսիա, դելեգացիա։*

Հեյեթի-Վյուքելա — هيئت وكلا — *Մինիստրների խորհուրդը։*

## Ղ.

Ղազի — غازی, ղեզա — غزا *բառից, որը նշանակում է պատերազմ՝ հանուն կրոնի, հանուն իսլամական կրոնի հաղթանակի։ Այդ նվիրական պատերազմին (ջիհադ) մասնակիցներն ու այդ պատերազմում հաղթողները ստանում էին* ղազի *տիտղոսը։*

Ղարիբ — غريب — *Պանդուխտ, հայրենիքից հեռացած, օտարության մեջ ապրող (հոգ.* ղուրեբա)։

Ղարիբլեր, Ղարիբլեր-բեոլուքյու — غريبلر، غريبلر بلوكی — *Օսմանյան պետության Կափը-կուլու (տե՛ս) կոչված հեծյալ զորախմբերի վեց վաշտերից մեկը կոչվում էր Ղարիբների վաշտ, որն իր հերթին բաժանվում էր Աջ և Ձախ ղարիբների վաշտերի* (Եմին *և* Եսար)։

Ղարիբե — غريبه — *Զվարճալի պատմվածք, տարօրինակ, չլսված դեպք։*

## Մ.

Մավերաի-ուլ-Նեհիր — ماوراء النهر — Մավերա՝ *անդր, այն կողմ (Մավերաի-Կաֆկաս — Անդրկովկաս),* Մավերաի-ուլ-Նեհիր՝ *գետից այն կողմ, Ջիհուն գետի այն կողմի երկրամասը։*

Մանղըր — مانغر — *Հին դրամական միավոր. փոքր պղնձյա դրամ, որի չորսը հավասար է մեկ ակչեի։*

Մյուբաշիր — مباشر — *Դատական կատարածու, պրիստավ։ Կառավարական հրամանները պատկանյալին հայտնող և կատարող պաշտոնյա։*

Մեթերիս — متريس — *Խրամատ, թշնամու գնդակներից պաշտպանվելու համար շինված հողապատնեշ։ Ժամանակավոր ամրություն։*

Մյութեվելլի — متولی — *Վակֆի կառավարիչը, որ Էվկաֆի մինիստրության հրամանների և ցուցմունքների համաձայն իրավունք ունի վակֆի եկամուտները ծախսել։* Վակֆ-մյութեվելիսի *(տե՛ս Թեվլիյեթ)։*

Մյութեսելլիմ — متسلم — *Տուրքահավաք։ Մի վարչության կողմից տուրքերն ու հարկերը հավաքելու պաշտոն ունեցող անձ։*

Մեջլիս — مجلس — *Ժողով, հավաք։ Պետական գործերի քննության և որոշման համար գումարված ժողով։* Մեջլիսի-մեբուսան՝ *պարլամենտ, պատգամավորների ժողով,* Մեջլիսի-Ալիյե՝ *Գերագույն ժողով։*

Մյուջահիդ — مجاهد — *Ջանասեր, անձնազոհ։ Հանուն իսլամական կրոնի մղվող պատերազմում (տե՛ս ջիհադ) կռվող անձ, մարտիկ։*

Մեջելլե — مجله — *Ժողովածու, հավաքածու։ Դատական օրենքների ու կանոնների ժողովածու։ Օրինագիրք։*

Մյուհթեսիբ — محتسب — *Քաղաք ներմուծվող և վաճառվող մթերքներից և իրերից տուրք ստացող պաշտոնյա,* Իհթեսաբջի։ *Աբբասիների ժամանակ քաղաքի կարգապահության և կշիռների ու չափերի ճշտության հսկող պաշտոնյա, շահնա, սուբաշը։*

Մուհասեբեջի — محاسبه‌جی — Հաշվապահ, սանջակի ֆինանսական գործերի պաշտոնյա։

Մուհասսիլ — محصل — Պետական եկամուտները հավաքող պաշտոնյա, Թահսիլդար։

Մուհարրեմ — محرم — Արաբական տոմարի լուսնային տարվա առաջին ամիսը։

Մյուդերրիս — مدرس — Դասախոս։ Ջամիներին կից մեդրեսեներում աստվածաբանություն և այլ կրոնական դասախոսություններ կարդացող անձ։

Մեդրեսե — مدرسه — Դպրոց։ Աստվածաբանական և այլ կրոնական գիտելիքների դասավանդության համար ջամիներին կից հատուկ իսլամական դպրոց։

Մյուրթեդդ — مرتد — Կրոնափոխ։ Իսլամական կրոնից հրաժարվելով այլ կրոն և դավանանք ընդունող անձ։

Մերհելե — مرحله — Իջևան, մեկ օրվա ճանապարհ. երկու իջևանի միջև եղած տարածություն։ Հոմանիշները՝ մենզիլ, կոնաք *(տե՛ս)*։

Մեզատ — مزاد — Աճուրդ, աճուրդով վաճառք։ Աճուրդի շուկա։ Գործ է ածվում նաև սեվքի-սուլթանի *(տե՛ս սեվք)*։

Մեսջիտ — مسجد — Տե՛ս ջամի։

Մյուշիր — مشير — Մարշալ։ Զինվորական աստիճանում մյուշիրը վեզիրին հավասար աստիճան ուներ և համարվում էր ամենաբարձրը։

Մյուֆթի — مفتي — Ֆեթվա տվողը, շարիաթական հարցերի վերաբերյալ տրված հարցերին, առանց անունը տալու, շարիաթի սկզբունքների համաձայն պատասխանող անձ։ Տե՛ս ֆեթվա։ Մյուֆթիլիք — մյուֆթիության պաշտոնը։

Մուկաթաա — مقاطعه — Նախկին վակֆային հողերից, այգիի և պարտեզի վերածվածներից, իբրև տասանորդ, միանվագ ստացված վարձքը։

Մուկաթաալը — مقاطعه‌لی — Տասանորդային տուրքը միանվագ վճարելու պայմանով սեփականության վերածված կալվածք։

Մեքթուբի, Մեկթուբջի — مكتوبي، مكتوبجي — Մի հիմնարկության կամ վիլայեթի գրավոր գործերը ղեկավարող բարձր պաշտոնյա, գրասենյակի պետը։

Մեքթում — مكتوم — Պահված, թաքնված։ Զորակոչից փախչելու

նպատակով մարդահամարի մատյանում չարձանագրված անձ։ Պետական տուրքերը չվճարելու համար չարձանագրված կալվածներ և եկամուտներ։

Մելիք — ملك — Մելիք, իշխող, իշխան։

Մյուլք — ملك — Կալված, սեփականություն, անշարժ կալվածք (հող. էմլաք)։

Մինբեր — منبر — Ջամիներում խութբե (տե՛ս) կարդալու հատուկ աստիճանավոր ամբիոն։

Մինարե — مناره — Մինարե։ Ջամիներում մյուեզզինի էզան կարդալու հատուկ բարձր աշտարակ։ (տե՛ս էզան)։

Մենշուր — منشور — Հրատարակված, հայտարարված։ Փադիշահի կողմից վեզիրություն և այլ բարձր պաշտոններ և աստիճաններ շնորհող ֆերման։

Մյուհյուր (մեոհր) — مهر — Կնիք, դրոշմ։

Մյուհյուրդար — مهردار — Մեծ մարդկանց կամ բարձր հիմնարկների կնիքը պահող և պաշտոնական գրությունները կնքելու իրավունք ունեցող անձ։ Կնիքապահ։

Մյուեզզին — مؤذن — Մինարեում էզան կարդացող հատուկ պաշտոնյա։

Մյուվերրիխ — مورخ — Պատմագիր, պատմություն գրող։ Թարիխչի։

Մոլլա — ملا — Իսլամական բարձր հոգևորականներին տրված «մեվլանա» տիտղոսից։ Մեծ կադի։ Աստվածաբանություն ու կրոնական գիտելիքները ուսումնասիրող անձ։

Մեվլեվի — مولوى — Դերվիշական միաբանություն՝ հիմնված հայտնի Ջելալեդդինի -Ռումիի կողմից։ Մեվլեվի-դերվիշի։

Մեվլեվիյեթ — مولويت — Մեծ կադիի, այսինքն մոլլայի կրոնական աստիճանը և նրա կադիության շրջանը (քաղաքամասը)։

Միլադ — ميلاد — Քրիստոսի ծննդյան տարեթիվը։ Քրիստոնեական տարեթիվը։

Միլադի — ميلادى — Քրիստոնեական տարեթվով հաշված։ Թարիխի-միլադի։

Միրիմիրան — ميرميران — Քաղաքացիական աստիճան՝ փաշայից հետո, էյալեթի վարչության պետը, վալի։

Միրլիվա — ميرليوا — Երկու գնդից (պոլկ) կազմված զորամասի

հրամանատարը, այդ հրամանատարության հատուկ աստիճան, որը փաշայից հետո երրորդն է համարվում:

Միրախոր — میراخور — Կայսերական հատուկ ախոռի պետը: Խասս ախոր՝ փադիշահի կենդանիների հատուկ ախոռ:

Միրի — میری — Պետական, կառավարական գանձարանին հատուկ:

Յ.

Յավեր — یاور — Օգնական, հրամանատարի տրամադրության ներքո աշխատող սպա: Առանց պաշտոն ունենալու փադիշահի կողմից Յավերի տիտղոսը ստացած անձ: Սեր-Յավեր՝ փադիշահի յավերների գլխավորը:

Յավուզ — یاووز — Խիստ, ուժեղ, դաժան, անհարկու: Յավուզ-Սուլթան Սելիմ:

Յայա — يايا — Օսմանյան առաջին հետիոտն բանակը:

Յուք — يوك — Բեռ, ծանրություն: Դրամի չափ, հինգ հարյուր հազար դուրուշը համարվում էր մեկ յուք:

Յուրուք — يوروك — Ոչ-նստակյաց, քոչվոր հասարակություն, ցեղ, աշիրեթ, բեդևի, վրանաբնակ: Այդպես էին կոչվում Անատոլիայում մի շարք թուրքմեն աշիրեթները:

Յորթլուք և օջաքլըք — يورتلق و اوجاقلق — Պետության սահմանների վրա գտնված հողերը, հաճախ անջատվում և Յորթլուք-Օջաքլըք անունով իրենց տերերին էին թողնվում: Նրանք կառավարում էին այդ հողերը և նրանց տասանորդը ստանում, որի փոխարեն պարտավորվում էին պաշտպանել երկրի սահմանները և գնալ սահման բանակ ուղարկվելիս՝ ծառայել բանակում:

Ն.

Նահիյե — ناحيه — Վարչական բաժանման միավոր, գավառի (կազա) ստորաբաժանումը, գավառակ:

Նազըր — ناظر — Նայող, հսկող, մինիստր, նախարար: Մալիյե Նազըրը՝ ֆինանսների մինիստր:

Նեզարեթ — نظارت — Հսկողություն, մինիստրություն: Դախլիե-Նեզարեթի՝ Ներքին (գործոց) մինիստրություն:

Նամե — نامه — Նամակ, գրություն, բարդությունների մեջ—նամըր-

նամե՝ հրամանագիր, թալիմնամե՝ հրահանգ. սալնամե՝ տարեցույց, շեհադեթնամե՝ վկայական:

Նայիբ — نایب — Փոխանորդ, կադիի փոխանորդը: Արփալըքի (տե՛ս) կարգով վերցված մի գավառի փոխանորդաբար կադիություն անող շարիաթական պաշտոնյա:

Նեդիմ — ندیم — Ասմակից, զվարճախոս, ծաղրածու: Մեծ մարդկանց գեղեցիկ խոսքերով և սրամտություններով զվարճացնող անձ: Նեդիմի-խաս՝ արքունական նեդիմ:

Նարխ — نرخ — Կառավարության կողմից նշանակված գին: Սննդամթերքների (հաց, միս և այլն) վաճառման համար կառավարության կողմից նշանակված գին:

Նիշանջի — نشانجی — Նշանի գրասենյակի պետը: Փադիշահական նշանը նկարողը: (Տե՛ս բուղրեքեշ և բեվկիի բառերը):

Նազմ — نظم — Ոտանավոր, ոչ-արձակ գրվածք: Հանգավոր և չափավոր գրվածք:

Նաքիբ — نقیب — Ցեղի կամ ժողովրդի պետը կամ նրա փոխանորդը և մարդկանց տոհմաբանության մասնագետը: Թեքքեում շեյխին փոխարինող տարեց դերվիշ:

Նեվրուզ — نوروز — Նոր օր, նոր տարի: Հին իրանական տոմարով տարեգլուխ և գարնան սկիզբը համարվող մարտ ամսվա 9-րդ օրը:

Նեվրուզ բայրամը՝ — نوروز بایرامی — Նեվրուզի տոնը, բայրամը:

Նամազ — نماز — Նամազ: Իսլամական կրոնի համաձայն օրվա ընթացքում հինգ անգամ որոշյալ ժամերին նամազի արարողությունը: Նամազ-կըլմաք:

Նեմչե — نمچه — Ավստրիա, Գերմանիա, գերմանական լեզու:

Նեմրուդ — نمرود — Ըստ ավանդության Բաբելոնում իշխող արքաներից մեկը, որը կառուցել է Բաբելոնի աշտարակը: Պնդակուրծ, դաժան, համառ անձնավորություն:

Շ.

Շամ — شام — Դամասկոս, հնում Սիրիական երկրամասը նույնպես Շամ էր կոչվում:

Շահ — شاه — Արքա, թագավոր, հատկապես Իրանի շահը, որը կոչվում է նաև Շահնշահ, Արքայից-արքա:

Շահի — شاهی — Իրանական փոքր դրամ: Հին թնդանոթների մի տեսակը:

Շահնամե — شاهنامه — Վեհապետի, շահի, սուլթանի կենսագրությունն ու գործունեությունը ներբողող ոտանավոր, գիրք: Ֆիրդուսիի հայտնի գիրքը «Շահնամե»:

Շահնամեջիան — شاهنامه‌خوان — Շահնամե ասող: Այդպես էին կոչվում Օսմանյան պետության հիջրի 1000 թ. առաջ արքունական պատմագիրները, որոնք սուլթանների պատմությունը գրում էին Շահնամեի ձևով:

Շարիաթ — شريعت — Ուղիղ ճանապարհ: Աստվածային կանոններ: Մի երկրի կառավարության համար աստվածային հրամանների և պատվերների վրա հիմնված նվիրական կանոններ: Մուհամմեդի կողմից սահմանված շարիաթը կոչվում է շարիաթի-իսլամիե:

Շերի — شرعی — Շարիաթին հատուկ, օրինական, ըստ շարիաթի:

Շերիֆ — شريف — Ազնիվ, պատվավոր, ազնվացեղ. նվիրական, օրինակ՝ Ջամիի-շերիֆ: Մուհամմեդի ազնվացեղ գերդաստանին պատկանող: Շերիֆի-Մեքքե:

Շերաֆեթ — شرافت — Ցեղով, գերդաստանով ազնվություն (շերիֆություն) ունեցող: Շերիֆի իշխանության ենթակա երկիր: Շերիֆություն: Երկու նվիրական քաղաքների — Մեքքեի և Մեդինեի իշխանությունները, Օսմանյան պետության վարչական բաժանման մեջ կոչվում էին շերիֆություն:

Շաբան — شعبان — Արաբական տոմարի լուսնային տարվա 8-րդ ամիսը:

Շեվվալ — شوال — Արաբական տոմարի լուսնային տարվա 10-րդ ամիսը:

Շեհիդ — شهيد — Հանուն իսլամական կրոնի պատերազմում զոհված իսլամը: Նահատակ:

Շեհզադե — شهزاده — Արքայորդի, արքայական ծագում ունեցող, Օսմանյան սուլթանների որդիները կոչվում էին շեհզադե:

Շահսուվար — شهسوار — Վարպետ և ճարպիկ ձիավոր, ձի հեծնող:

Շեյխ — شيخ — Հասակավոր, պատվավոր ծերունի մարդ: Դերվի-

*շական օրդենների (կարգ, միաբանություն) պետ, թեքքեի շեյխը: Արաբական ցեղերի (աշիրեթ) պետը:*

Շեյխ-ուլ-իսլամ — [illegible] — *Օսմանյան պետության մեջ շարիաթական գործերին հսկող բարձրաստիճան իսլամական ղեկավար, որը շարիաթի գործերում համարվում էր պետության ղեկավարներից և սադրազամներից հետո ամենաբարձր աստիճանավոր անձը:*

Շիա — شيعه — *Իսլամական կրոնում Շիա դավանանքը (Ալիին հետևողները), Շիի՝ Շիա դավանանքին պատկանող անձ:*

## Ո. ՈՒ

Ուլեմա — علما — *(Ալիմի հոգ.) գիտնականներ, իմաստուններ, գիտությամբ և կրոնական գործերով զբաղվող մարդիկ, որոնք ունեին իրենց հատուկ տարազն ու աստիճանը:*

Ուլուֆե — [illegible] — *Զինվորներին տրված ռոճիկը, ըստ Շ. Սամիի «Ուլուֆե» բառացի նշանակում է կենդանիների կեր:*

Ուշր — عشر — *Տասից մեկը, տասանորդ (հարկ): Աշար: Ուշրիշերիի՝ Շարիաթական չտասանորդ:*

Ուլուս — ونوس — *Ժողովուրդ, հասարակություն, Ուլուսի ստորաբաժանումները՝ Իլ, Օյմաք, Ուրուք:*

## Չ.

Չավուշ — [illegible] — *Դիվանում և այլ պետական հիմնարկներում և կամ արքունիքում ծառայող փոքր սպա: Չավուշ-բաշը՝ չավուշների պետը:*

Չուբուք — چبوق — *Երկար փայտ, ծխախոտ ծխելու հատուկ ծխափող: Չուբուքչի՝ չուբուքի և ծխախոտի գործերին հսկող ծառա: Չուբուք շինող արհեստավոր:*

Չըրաք — چراق — *Արհեստ սովորելու համար վարպետի ձեռքի տակ աշխատող երիտասարդ աշակերտ:*

Չերխեջի — [illegible] — *Բանակի առաջապահների մասում շրջադարձ շարժումով կռվող թեթև զինվորական մաս:*

Չելեբի — چلبی — *Աղա, էֆենդի, գրագետ և պատվավոր էֆենդի: Այս տիտղոսը տրվում էր սուլթանների որդիներին: Սուլթաններից Մուհամմեդ I-ը նմանապես Չելեբի է կոչվել:*

Չուխադար — [illegible] — *Բրդից գործված կերպասի, չուխայի հա-*

գուստով կամ չուխայից վարագույրի առաջ հրամանի սպասող ծառա, որը այդ դարերին առանձին դաս էր կազմում Կափըչուքադարի՝ վեզիրների հատուկ հանձնարարությունները կատարող պաշտոնյա:

Չիֆթլիք — چفتلك — Ագարակ, մեծ անտեսություն, որն ուներ մեծ տարածություն հողեր, արոտավայրեր, անտառներ, շինություններ և այլն: Այստեղ աշխատում էին վարձու աշխատողներ — չիֆթչիներ և կիսարարներ, որոնք ապրում էին այդ անտեսության մեջ:

Չըղ — چغ — Սարերից իջնող ձյան հյուս:

## Ջ

Ջամի — جامع — Իսլամական տաճար, մինարեով (տե՛ս մինարե) և մինբարով (տե՛ս մինբար) մեծ մզկիթ, որի մեջ խութբե (տե՛ս խութբե) է կարդացվում: Ջամիի-շերիֆ:

Ջեբեջի — جبه جی — Օսմ. բանակի զրահավոր դասի զինվոր: Ջեբեջի-բաշը՝ այդ դասի զինվորների հրամանատարը:

Ջեբելու — جبه لو — Թիմարի տերերի կողմից տրված զինված ու զրահավոր հեծյալ զինվոր (տե՛ս Թիմար):

Ջիզիե — جزیه — Օսմանյան պետության ոչ-իսլամ հպատակներից առնված անձնական տուրք, գլխահարկ (տե՛ս խարաջ):

Ջելալի — جلالی — Ապստամբ, ըմբոստ, ավազակ: Թուրքիայում գյուղացիական ապստամբական շարժում XVII դարում:

Ջեմազիել-եվվել — جمادی الاول — Արաբական տոմարի լուսնային տարվա 5-րդ ամիսը:

Ջեմազիել-ախըր — جمادی الآخر — Արաբական տոմարի լուսնային տարվա 6-րդ ամիսը:

Ջիհադ — جهاد — Պատերազմ հանուն կրոնի՝ իսլամական կրոնը տարածելու համար:

Ջիհանգիր — جهانگیر — Աշխարհակալ, հաղթանակող. ջիհանգիրլիք՝ աշխարհակալություն:

Ջիհաննյումա — جهاننما — Աշխարհի տեսքը, երկրագնդի նկարագրություն, աշխարհագրություն: Հայտնի պատմագիր-աշխարհագրագետ Քյաթիբ-Չելեբիի «Աշխարհագրությունը»:

Ռաֆըզի — رافضى — Իսլամական շիա դավանանքի ռաֆըզի սեկտին պատկանող։ Ռաֆըզիական դավանանքը, ռաֆըզիություն։

Ռեբի-ուլ-էվվել — ربع الاول — Արաբական տոմարի լուսնային տարվա 3-րդ ամիսը։

Ռեբի-ուլ-ախըր — ربع الآخر — Արաբական տոմարի լուսնային տարվա 4-րդ ամիսը։

Ռեջեբ — رجب — Արաբական տոմարի լուսնային տարվա 7-րդ ամիսը։

Ռեայա — رعايا — Հոտ, արածող կենդանիների հոտը։ Իսլամական պետության (սուլթանի) իշխանության հպատակ և սահմանված տուրքերը վճարող ոչ-իսլամ հասարակություն։ Ռայա։ (Տե՛ս բերայա)։

Ռեսմի-բիդաթ — رسم بدعت — Նորություն, նոր երևան եկած իրերի կամ մթերքների համար վճարված տուրք։ Ապօրինություն։

Ռիսալե — رساله — Նամակ, գրքույկ, բրոշյուր, մոնոգրաֆիա։

Ռյուքն — ركن — Հենարան, հիմք, կազմ։ Էրքան՝ պետության կարևոր և բարձրաստիճան անձերից յուրաքանչյուրը։ Էրքանի-դեվլեթ՝ պետության ղեկավարները, Էրքանի-հարբ՝ պատերազմի ժամանակ ռազմական բոլոր գործերը ղեկավարող զինվորական մարմին։

Ռամազան — رمضان — Արաբական տոմարի լուսնային տարվա 9-րդ ամիսը։ Ռամազան ամսում իսլամների ծոմը (օրուչ)։

Ռենջբեր — رنجبر — Հողագործ՝ օրավարձով աշխատող երկրագործական բանվոր։

Ռուզնամե — روزنامه — Օրագիր, ամենօրյա ծախսերի և եկամուտների արձանագրության հատուկ մատյան. ամենօրյա դեպքերը արձանագրող թերթիկ։ Օրացույց։ Ռուզնամիջի՝ օրացույց կազմող անձը։

Ռում — روم — Նախապես «ռում» անունը տրվել է հռոմեացիներին, հետո բյուզանդական կայսրության սահմաններում ապրող ժողովուրդներին. հույն։

Ռումելի — روم ايلى — Օսմ. պետության եվրոպական մասը։

Ռումի — رومی — Հունական։ Լիսանի-ռումի՝ հունական լեզուն։ Հնում «ռում» էին կոչվում նաև Անատոլուի և Ռումելիի սահմաններում ապրող ժողովուրդները։

Ռեիս — رئیس — Նախագահ, գլխավոր, մեծ, պետ։ Ռեիսի-ջումհուր՝ հանրապետության նախագահ, պրեզիդենտ. Մահքեմե-ռեիսի՝ դատարանի նախագահ։

Ռեիս-էֆենդի — رئیس افندی —
Ռեիս-ուլ-Քուտտաբ — رئیس الکتاب — | Օսմ. պետության XVI—XVII դարերում արտաքին գործերի մինիստրի պարտականությունները կատարող անձը այդպես էր կոչվում։

## Ս.

Սալար — سالار — Պետ, գլխավոր հրամանատար։ Սալարի թայֆա՝ ցեղապետ։

Սիփահսալար — سپهسالار — Զինվորական մեծ հրամանատար, սերդար, սերասքեր, սիփահսալար։

Սալյանե — سالیانه — Հպատակներից տարեկան մի անգամ միանվագ առնված տուրք։ Օսմ. պետության հպատակ որոշ երկրները միանվագ սալյանե էին վճարում, որոնք կոչվում էին սալյանեով կառավարվող երկրներ, օր. Եգիպտոսը, Հաբեշստանը և այլն։

Սիփահի — سپاهی — Օսմանյան պետության մեջ հատուկ հեծյալ զորամասեր, որոնք համալրվում էին թիմարի և զեամեթի տերերից։ Սիփահիները պատերազմի էին գնում իրենց ձիերով ու կառավարական զենքերով։ Սիփահի-օջաղը։

Սեբիլ — سبیل, Սեբիլխանե — سبیلخانه — Ճանապարհ, ուղի։ Բարեգործական նպատակով ճանապարհների և հրապարակների վրա կառուցված հատուկ շենք, որի պատուհաններում անցորդների համար մշտապես խմելու ջուր էր լինում։ Սեբիլջի՝ Վակֆների կողմից բարեգործական նպատակով փողոցներում խմելու ջուր բաժանող անձը։

Սիջիլ — سجل — Հիմնական տոմար, մայր տոմար, որի մեջ արձանագրվում էին դատարանի վճիռները, դոկումենտները և պայմանագրերը։ Սիջիլլի՝ Սիջիլի մատյանում արձանագրված։

Սարայ — سرای — Պալատ, արքունիք։ Սարայի-հյումայուն՝ Փադիշահական, սուլթանական արքունիք։

Սերդար — سردار — Զինվորների պետը, հրամանատարը: Սերդարի-էքրեմ՝ Գերագույն հրամանատար: Օսմանյան բանակի գերագույն հրամանատարը պատերազմի ժամանակ հաճախ նշանակվում էր սադրազամը՝ փադիշահի կողմից:

Սերասքեր — سرعسكر — Զինվորների և բանակի հրամանատարը: Հնում սերասքեր էին կոչվում նաև որոշ ուղղությամբ ուղարկված բանակի հրամանատարները:

Սերբերդե — سر كرده — Պետ, ցեղապետ, ոչ-կանոնավոր զինվորական մասերի պետը:

Սերդեն-Գեչդի — سردن گچدی — Ենիչերիական բանակի մի զորախումբը, որի զինվորները պատերազմի ժամանակ բացառիկ հերոսությամբ և անձնազոհությամբ հարձակվում էին թշնամու բանակի և բերդերի վրա՝ հաճախ իրական մահը աչքն առած:

Սիլահդար — سلاحدار — Զինակիր: Վեզիրների և այլ բարձրաստիճան անձանց զենքերը պահող և կառավարող ագան:

Սուլթան — سلطان — Վեհապետ, կայսր, փադիշահ, Օսմանյան պետության սուլթաններ: Սալթանաթ՝ Փադիշահություն, վեհապետություն, սուլթանություն:

Սանջակ — سنجاق — Դրոշակ, դրոշ: Վարչական բաժանման մեջ էյալեթի կամ վիլայեթի ստորաբաժանումը (լիվա):

Սանջակ-բեյի — سنجاق بکی — Սանջակի բեյը, կառավարիչը:

Սանջակի-շերիֆ — سنجاق شريف — Նվիրական դրոշակ: Իսլամական կրոնի խորհրդանիշը եղող հատուկ դրոշակ, որը դուրս էր բերվում պատերազմի ժամանակ, բացառիկ ծանր պայմաններում:

Սանջակտար — سنجاقدار — Դրոշակակիր: Հոմանիշներ՝ բայրաքդար, ալեմդար:

Սեքբան — سكبان — Մեծ տներում (վեզիրների, փաշաների և այլն) որսորդական շներին հսկող և կառավարող ծառան: Ենիչերիական օջաքին կցված զինվորների դասը:

Սեքբան բաշը — سكبان باشى — Այդ զինվորների գլխավորը, պետը:

Սյուննի — سنى — Մահմեդական կրոնի սյուննի դավանանքին հետևողները, որոնք կոչվում էին Եհլի-սյուննեներ:

**Սեվք, Սեվքի-սուլթանի** — سوق سلطانی ؛ سوق — Սեվք՝ *շուկա,* Սեվքի-սուլթանի՝ *անուրդով վաճառքի շուկա:*

**Սեդարեթ** صدارت — *Նախագահություն. Օսմանյան պետության սադրազամի կոչումն ու պաշտոնը:*

**Սադրազամ** — صدر اعظم — *Վեզիրների և վեքիլների պետը, Սադրազամ, որը համարվում էր փադիշահի բացարձակ տեղակալը:*

**Սաֆեր** — صفر — *Արաբական տոմարի լուսնային տարվա 2-րդ ամիսը:*

**Սալիհ, սուլեհա** — صالح ؛ صلحا — *Իրավատեություն և իրավունք ունեցող, կրոնի հրամանների և ցուցմունքների համաձայն շարժվող անձինք: Աստվածավախ, աղոթքով ու ծոմապահությամբ ապրող հավատացյալներ:*

**Սուրրե** — صره — *Փողի քսակ: Սուլթանի կողմից ամեն տարի մեծ հանդիսավորությամբ նվիրական քաղաքներին (Մեքքե և Մեդինե) ուղարկված մեծ նվեր:* Սուրրեի-հյումայուն:

**Սոմար** — صومار — *Հացահատիկի չափ, հավասար է 16 փթի:*

**Սոլաք** — صولاق — *Հանդիսավոր օրերին փադիշահի ասպանդակին ծառայող զինվորների խումբը:*

**Սուբաշը** — صوباشى — *Ոստիկան և խմելու ջրերի բաժանման հսկող պաշտոնյա: Երկրի կարգ ու կանոնի պահպանության հսկող անձ:*

## Վ.

**Վարոշ** — واروشه — *(հունգարերեն). Քաղաքների բերդի պարիսպներից դուրս թաղամաս, ուր մեծամասամբ ապրում էին քրիստոնյա հպատակները:*

**Վալի** — والى — *Վիլայեթի կառավարիչը, կուսակալ, նահանգապետ:*

**Վեզիր** — وزير — *Փադիշահի տեղակալն ու փոխանորդը համարվող բարձրաստիճան անձ, վեզիր: (Հոգ.* վյուզերա*):*

**Վեզիրի-ազամ** — وزير اعظم — *Մեծ վեզիր, սադրազամ:*

**Վակա-նյուվիս** — وقعه نويس — *Պատմագիր, տարեգիր: Երկրի դեպքերը և գործերը ըստ տարիների գրի առնող տարեգիր, որը նշանակվում էր փադիշահի կողմից:*

**Վակֆ** — وقف — *(հոգ. էվկաֆ). Շարիաթի սկզբունքներով բա-*

բեգործական նպատակով ջամիներին նվիրված կալվածներ և այլ սեփականություններ:

Վեքիլ — وكيل — Փոխանորդ, փոխարինող, օր. Նազըր-վեքիլի, ռեիս-վեքիլի: Կառավարության ղեկավար անձինք (վեքիլներ): Բաշ-վեքիլ՝ Սադրազամ, Հեյեթի-վյուքելա՝ Մինիստրների Խորհուրդը:

Վիլայեթ — ولايت — Նահանգ, վարչական բաժանման մեծ միավորը (տե՛ս էյալեթ):

Վիրա — ويره — Հանձնվել, բերդի «վիրայով» հանձնումը:

Վեսսելամ — والسلام! — Ահա՛ այսչափ. ահա՛ բոլորը, վերջացավ:

## Փ

Փաչավրա — پاچاوره — Սեղանը, ամանները և այլն մաքրելու կամ տաք իրերը բռնելու համար գործածված հին կտոր:

Փադիշահ — پادشاه — Վեհապետ, կայսր, սուլթան, արքա: Ալ-Օսմանի փադիշահները՝ սուլթանները: Փադիշահություն, Փադիշահի՝ կայսերական, փադիշահական, փադիշահին հատուկ:

Փարե — پاره — Մաս, կտոր, հատ, իբրև փող՝ ղուրուշի (տե՛ս) քառասուն մասից մեկը, որը հավասար էր երեք ակչեի:

Փաշա — پاشا — Ըստ Շ. Սամիի «բաշ» և «աղա» բառերից: Թուրքիայում վեզիրներին և այլ բարձրաստիճանավորներին տըրված տիտղոս (թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական):

Փաշալըք — پاشالق — Փաշայական տիտղոսը: Մի փաշայի իշխանության տակ գտնված երկրամասը, էյալեթ և այլն:

Փաշա-կափըսը — پاشا قپوسی — Բարձրագույն Դուռ, Բաբի-Ալի:

Փենջիկ — پنجيك — Թուրքիայում հնում ընդունված կարգով պատերազմական ավարի $^1/_5$-ը («խումսի-շերի») փադիշահին էր պատկանում: Պատերազմական գերիները նմանապես ենթակա էին այդ կանոնին: Գերին գնահատվում էր 125 ակչե. այդ գումարը վճարելիս գերին ազատվում էր գերությունից: Այդ գումարի $^1/_5$-ը «փենջիկ» անունով պետական գանձարանին վճարելուց հետո ստրուկի տերը կուներ իրավական լրիվ իրավունք իր ստրուկի վրա: Վերոհիշյալ գումարը համարվում էր «բեդելի-եսարեթ»՝ գերության գին:

**Փայե** — فاي — Ընդհանրապես գիտության անձանց տրված աստիճան, կարգ:

**Փիր** — پير — Ծերունի, հասակավոր մարդ. մի սեկտի հիմնադիրը՝ էսնաֆների խմբերի ղեկավարը (փիրը):

**Փոյրազ** — پويراز — (Հուն.) Հյուսիսային սառը քամի:

## Ք.

**Քյաֆիր** — كافر — Չիմացող, անտեղյակ, ապերախտ: Անհավատ, ոչ-մուսուլման, (հոգ.) քյուֆերա, սովորական լեզվով՝ «գյավուր». (որն ըստ Շ. Սամիի «քյաֆիր»-ից է առաջացել):

**Քեթխուդա** — كتخدا. («Քեհյան» այս բառից է առաջացել): Տանուտեր, մի հիմնարկության կամ վարչության գործերը վարելու վստահված անձ, Վեզիրների քեթխուդա, Սուլթանի քեթխուդա, էսնաֆների քեթխուդա—քեհյա: Քյոյ-քեդխուդասը՝ գյուղի մուխթարը:

**Քուրսի** — كرسى — Աթոռ, նստարան. ամբիոն, պաշտոնավայր. հռետորի կամ ճառախոսի բարձրադիր ամբիոն: Կենտրոն:

**Քիլար** كيلار — Հացահատիկի և սննդամթերքի ամբար. շտեմարան:

**Քիլե** — كيله — Հացահատիկների չափ. հավասար է մոտ 40 լիտրի:

**Քյաբե** — كعبه — Նվիրական Մեքքի քաղաքում այն սուրբ վայրը, որը ըստ ավանդության, հիմնվել է Աբրահամից և համարվում է բոլոր մուսուլմանների ուխտագնացության վայրը և կըբլեի կողմը (տե՛ս կըբլե):

**Քիսե, քեսե** كيسه — Փոքր տոպրակ, դրամապարկ, քսակ: Դրամի քիսեն բովանդակում էր 500 ղուրուշ:

**Քիսեդար** — كيسه دار — Մեծ մարդկանց դրամի քսակը բռնող և հարկ եղած ժամանակ դրամ տվող մարդը: Կոչվում էր նաև վեքիլխարջ:

## Օ.

**Օթար,Օթաղ** — اوتاغ — Փադիշահին և այլ բարձրաստիճան անձանց հատուկ բարձր և զարդարված վրան: Օթաղի-հյումայուն՝ կայսերական վրան:

**Օջախ** — اوجاق — Օճախ, կրակ վառելու տեղ, ծխնելույզ: Հան-

քերի և քարերի նման փոս կամ հոր: Մեծ ընտանիք, գեր-
դաստան: Ենիչերի-Օջաղի՝ ենիչերիների զինվորական կազմը:
Օջաք-խալքը:

Օջաքլըք — اوجاقلق — Հին ժամանակ՝ հետիոտն զինվորներ: Մե-
կին ժառանգական կարգով տրված կալվածք կամ պաշտոն:

Օրդու — اوردو — Բանակ, զինվոր, սիփահ: Օրդուի-հյումայուն՝
Փադիշահական բանակ: Զորամաս:

Օդա — اوطه — Սենյակ, դրասենյակ, կաբինետ, բյուրո, պալատ:

Օբա — اوبه — Մի քանի մասի բաժանված մեծ և երկար շար-
ժական վրան: Վրանաբնակ, քոչվոր հասարակություն:

Օկկա — اوقه — Ծանրության չափ, որը բաժանվում է 400 դիր-
հեմի (տե՛ս դիրհեմ): Օկկան կոչվում է նաև Նիւե. հավասար
է 1 կիլ. և 225 գրամի:

Օյմաք — اويماق — Ցեղ, աշիրեթ, ուլուսի ստորաբաժանումը:

Օսմանլը — عثمانلى — Օսմանյան, օսմանցի: Օսմանլըլըք՝ օս-
մանցիություն: Օսմանի՝ օսմանյան երկերին, լեզվին և պատ-
մության վերաբերյալ, օրինակ՝ Թարիխի-Օսմանի:

Ֆ.

Ֆաթիհ — فاتح — Հաղթող, նվաճող, աշխարհակալ: Օսմ. պե-
տության սուլթաններից Մուհամմեդ II-ը Կ. Պոլիսը գրավե-
լու համար ստացավ «Ֆաթիհ» տիտղոսը: Գործ է ածվում
նաև Էբու-էլ-Ֆեթհ՝ Ֆաթիհների հայրը:

Ֆալիե — فاليه — Բերնից լցվող հին ձևի թնդանոթների հրանցքը:

Ֆալիեջի — فاليه‌جى — Թնդանոթների հրանցքը գործածող մաս-
նագետ զինվոր:

Ֆիթրեթ — فترت — Միջիշխանություն. թագավորի կամ սուլ-
թանի իշխանության ընդհատված շրջանը: Օրինակ, Սուլթան
Ելդըրըմ Բայազիդի և Չելեբի Մուհամմեդի իշխանության ընդ-
հատված շրջանը միջիշխանությունը կոչվում է «Դեվրի Ֆիթ-
րեթ»:

Ֆիթնե — فتنه — Խռովություն, խառնակություն, ապստամբու-
թյուն:

Ֆեթվա — فتوى — Մի հարցի կամ դատական գործի մա-
սին, շարիաթի սկզբունքների և ցուցմունքների համաձայն,

մյուֆթիի կողմից՝ առանց անունը հիշելու տրված գրավոր պատասխանը։ Առհասարակ կոչվում է ֆեթվայի-շերիֆ։

Ֆիթիլ — فتیل — Պատրույգ, կանթեղի, մոմի, լամպի և այլնի պատրույգ։ Հրացանի և թնդանոթի ֆիթիլը։ Ֆիթիլջի՝ դրա մասնագետը։

Ֆըրկա — فرقه — Պարտիա, զորամաս, դիվիզիա։ Ֆըրկա-կոմանդանի՝ դիվիզիայի հրամանատարը։

Ֆերման — فرمان — Հրամանագիր, փադիշահի կողմից գործադրության համար տրված հրամանագիր, որը փադիշահի թուղրայով (տե՛ս) դրոշմված է լինում, ֆիրման։

Ֆըրսախ — فرسخ — Փարսախ, երկարության չափ։ Չորս ժամվա, այսինքն հինգ հազար մետր տարածություն։

Ֆիրենկ — فرنك — (Արաբականացած ձևը՝ էֆրինջ (տե՛ս), եվրոպացի, մասնավորապես ֆրանսիացի։ Առհասարակ Եվրոպայից ստացված կամ եվրոպական ձևով պատրաստված իրեր, օրինակ, ֆրենգ քեոմլեի՝ եվրոպական շապիկ։

Ֆիրենկի — فرنكى — Սիֆիլիս (ախտ). «Ֆրանսիական ախտ» անվանվել է այն հիմունքով, որ իբր թե այդ հիվանդությունը Արևելքում և Թուրքիայում տարածվել է Եվրոպայից։

Ֆեզլեքե — فذلكه — Համառոտություն, կրճատված։ Համառոտ պատմություն։ Օր. Քյաթիբ-Չելեբիի պատմությունը կոչվում է «Ֆեզլեքե»։

Ֆլորի — فلوری — Ոսկյա դրամ, լիրա, ֆլորին։